



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՄԵՐԱՅԻՆ ԲՈՒԹԵՐԱՆԵՐ
ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ



ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՔԱՂԱՍՈՒՆՆԸՉՈՐԱՆԵՐՈՐԻ

26 ՄԱՅԻՍ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ
= 1872 =

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ԽԴ.

26 ՄԱՅ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս. ԷՖ. (Բ. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Նորոգ ընտրութիւն Աղղ. վարչութեան Քաղ. ժողովոյ :
2. Ընտրութիւն նորոգ դիւանի Ընդհ. ժողովոյ :
3. Ատենական կանոնադրութիւն :
4. Կաթուղիկոսական և Պատրիարքական յարաբերութիւնք :

Ատենաք ժամը 7 ին քառորդ մնացած բացուեցաւ ՚ի ներկայութեան 47 երեսփոխանաց, որոց վերջին թիւը 89 ՚ի յանգեցաւ : Ատենադպիր Մէրեէմ-Վուլի էֆ. հիւանդութեան պատճառաւ բացակայ ըլլալով՝ անոր տեղ Պառնասեան Պ. էֆ. ստժամանակեայ Ատենադպիր կարգեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Մեծադոյն մաս ունենալու համար դեռ ևս ճ հոգի կը պակսի, նոյնպէս նախնիաց նիսակրու Ատենադրութիւնք այսօր ալ պատրաստ չեն, որ ժողովոյն դիտողութեան ենթարկուին և թէ բաց ՚ի վերջի շիտին ատենադրութենէ, արդէն 4 ատենադրութիւնք խմբադրուած են, սակայն տը պագրութեան չեն արուած մինչև ցարդ : Եւ թէպէտ այս մասին բացատրութիւն տալ Ա-

տենադպիր Մէրեէմ-Վուլի էֆէնտին անկէ, բայց ըստ որում այսօր հիւանդութեան պատճառաւ չէ կրցած դալ՝ սէտք եղած բացատրութիւնն իւր ներկայութեան իրմէ կը խնդրուի : Նաև երեսփոխաններն մին՝ Բէյնիրճեան Պրիդոր էֆէնտի, ճ անգամ յաջորդարար բացակայութիւն ունենալուն համար հրաժարեալ կը համարուի ըստ օրինի, և թէ այս հրաժարականի որոշումն առ այժմ կը մնայ մինչև ժողովոյն մեծադոյն մասը դոյացուի :

Գալով խնդրոց կարգին, նախնիաց նիստէն վիճարանութեան շարունակութիւնն որոշուած ըլլալով, չինգ երեսփոխանք՝ որ նախորդ նիստէն խօսք ուղած էին, այսօր պիտի խօսին կարգաւ. սակայն օրուան խնդրոյն անցնելէ առաջ Ս. Նտիազահ խօսք ուղած

ըլլալով՝ դիւանը կը պարտաւորի առաջին խոսքը Ս. Նախագահին առջև :

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Վեհափառ կաթողիկոսին կողմէ 2 օր առաջ կոնդակ մի եկած է առ իս, որուն մէջ կը հրամայէ որ երեսփոխանական ժողովոյն ներկայացուի նոյն կոնդակը, որուն քան զայլ ամեն խնդիր նախապատուութիւն տալ արժան է. ուստի կառավարիկներ որ այսօր կարգացուի այս կոնդակին ի լուր ժողովոյն, իսկ անոր վրայ ըլլալէք խորհրդածութիւնը՝ եթէ ժողովն չուզէ խնդրոց կարգէն շեղիլ, կը մնայ յաջորդ նիստին :

ՂԱԶԱՐԱՆԻՆ Ք. ԷՃ. — Զբարգացուած խօսք մը ունիմ. այս կոնդակը պատճառաւ մը եկած է, ըսել կուզեմ որ վարչութեան կողմէ Նորին Վեհափառութեան զրկուած յայտադրին պատասխանն է այս կոնդակը. սկիւր է որ նախապէս վարչութեան կողմէ զրկուած յայտադրիլ կարգացուի ի տեղեկութիւն ժողովոյն :

ՊԵՆԱՆ Ք. ԷՃ. — Ըստ որում այս կոնդակը խնդրոց կարգը չէ՝ անցած ասիական, կառավարիկներ որ ընթերցումը լինի և սպախնդրոց կարգն անցնի, որպէս զի երեսփոխանք պատրաստութիւն ունենան անոր վրայ :

ՊԱՆԱՍԵԱՆ Պ. ԷՄ. — Կը ձայնակցի և կը կրկնէ Պէկեան ԷՄ. ի պառնարիութիւնը :

Ժողովը միաձայն հաւանութեամբ կոնդակին ընթերցումը կորուչ, և Ս. Նախագահը կը յանձնէ նոյն կոնդակը Պատրիարքական փոխանորդ Տ. Մկրտան Հօր, որ յառաջ գալով ի դիւանն, գրուիլը կը բանայ և կը կարգաց զայն Ահաւակի օրինակը :

Պ Ա Տ Ճ Է Ն

ԳԷՈՐԳ ԾՍՈՒՍՑ ՔՐԻՍՏՈՍԻ և անհատանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և կոթողիկոս ամենայն Հայոց Մայրաղոյն Պատրիարք համադրական նախամեծար Աթոսոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Մերոյ կաթողիկէ Էջմիածնի. Գերապատիւ Պատրիարքի Հայոց Կ. Պօլսոյ Մկրտիչ Մերազան Սէքեպիսկոպոսի Խրիստեան խնդալ ի Տէր :

Անագան ուրեմն ընկալեալ գնտմակն թուագրերու ի 10 մարտ ամսոյ ստորագրութեամբ Ձեր և Մեծազատիւ Անդամոց Քաղաքական Ժողովոյ իրրե ի սպաստախանի մերում հեռագրի, ընթերցուց մեծաւ զարմացմամբ, զի հար-

ուածեալ զհնաւանդ և զուրազարծեալ իրաւունս Մայր Աթոսոյ և Ազգի, և մանաւանդ բանից ճարտարութեամբ յեզաշնջուալ յայլ իմն կերպարան զհալութիւն անցից խնդրոյն Սոյ, Զանայիք ցուցանել օգտակատ՝ և նոյն միութեան և սեփականութեան Ազգի, այն օրինակ սխալ և հակառակ կանոնաց Եկեղեցւոյ մերոյ կարկացութիւն Պատրիարքարանին Պօլսոյ առաջինն է, զոր բեւեք և սեռանեմք, այս, և առաջինն համարեցի յԱզգ մեր :

Ձեռք յերկրայս զի և խիզ՝ Ձեր ունի վիտյել, եթէ Վերադաստութիւն Ձեր, և Ս. Եպիսկոպոսապետ որ յՆիզ հանուր Ժողովի յայտնապէս ժխտելով ուխտի իւրեանց և երդմանց որ առաջի ահաւորին Աստուծոյ մեղանշնցին մեծապէս. իսկ Վարդապետք և Քահանայք և աշխարհական անդամք Երեսփոխանական Ժողովոյ, որք զործակից եղին Ձեզ՝ ներդաստութեան են արժանի, զի ոչ գիտէին իսկապէս զարարողութիւն ուխտի և զմե երդման Եպիսկոպոսաց ի ձեռնագրութեանն, բայց քաջ զիտեն Եպիսկոպոսապետք, զոր ուխտենն և երդնուն նախ ի ժողովի Եպիսկոպոսաց ի Սինոդի առաջի Մերոյ Խօջի և Աւետարանի, և սուր ի ժամու կոչման յաստիճան Եպիսկոպոսութեան՝ մինչ զգետաւորեալ և ի ծաւնկա իջեալ կան ի վերոյ ստորնաւանց սեզանոյ Մերոյն Ստեփաննոսի, թողում ասել զբանն զոր արատաւօր ի օսեցաք Ձեզ և ամենից Եպիսկոպոսաց ձեռնագրերց ի մէջ ի Սուրբ Պատարարի յառաջ քան զհարգելն զՁեզ ի կենարար մարմնոյ և յարենէ Տեսան փան նախանձախնդիր լինելոյ անխախտ պահպանութեան կանոնաց Եկեղեցւոյ մերոյ և օգտի տարապաղ Ազգիս, որ և ընկալայք յօժարակամ և խոստացայք կատարել անթերի զամենայն աւուրս կենաց Ձերոց :

Եթէ հանձարեղք ունաք եղին առաջի աչաց Ձերոց զօգուտ ինչ այնպիսի փան Ազգի և Եկեղեցւոյ, որ նոր էր և ընդդէմ հնաւանդ սովորութեանց Եկեղեցւոյս, սարս և արժան իսկ էր Ձեզ յայտնել նախ Մայր Աթոսոյ ըստ անխախտ կանոնաց Եկեղեցւոյ մերոյ և ըստ Սահմանագրութեան Տեղւոյդ և խորհրդակցիլ ընդ մեզ, և քանզի հեղինակ ուխտին այնորիկ և երդմանն մեք ինքնին չէաք, զի յանձնապատան և ջնջելոյ ունաք զիրաւունս, փան սրոյ հարկ լինել մեզ յայնժամ կազմել ժողով Եկեղեցական յամենայն կողմանց և խորհիլ և

զործանն և զօգտակարացոյնն անօրինակ միարան հաւանութեամբ : Ահա զայս կառեցաք ծանուցանել Ձեզ հետագրու, այսինքն շնորհաբար իսկ յանձնագրատան ի գործս և ի խնդիրս անդր քան զիրաւատութիւն Ձեր, չխտարել ի շաւղաց Մերոց նախնի Հօրոց, և եթէ իցէ հարկ սովորագրական սահմանել զնոր ինչ, Եկեղեցական Ժողովոյ միայն է անկ կազմեցելոյ ընդ նախագահութեամբ Բնիչանրական Հայրապետի ամենայն Հայոց՝ բայց սակայն բանք նոտեակի Ձերոյ զխօսին զմիտ, հեռագրի մերոյ առաջինն, իբր ընկալեալ արդէն մեր և Եկեղեցւոյն Հայրապետականց զօգորինի գործողութիւնս Ժողովոյդ փան ապագայի և եթէ զուչացուցանէաք, մի՛ այնպէս թաւեցիլ ձեզ Արեւելիք, այլ ի լսել մեր, զի ի միարան Եպիսկոպոսաց Մերոյ Էջմիածնի ընտրելիք պատրաստին փան Աոյ, փութացաք հեռագրել և հըրաւիրել զՁեզ ի զուչութիւն, զի խորհեալն ի Ձեզ զոր կամիք ի գործ գնել, նա ի վեր է քան զձեռնհասութիւն Ձեր, և վերադասեալ միայն Բնիչանուր Ժողովոյ, բայց կարծել կամիք թէ մտադիր լեալ իցեմք կաշմել զձեզով փան : յարարելութեանն որ և ցանկաց իմանալ եթէ ո՞ր ունիցի գումարունն Ժողովոյն և սրբիսի եղանակաւ, մեք չկարծեմք երկէք զի Երեսփոխանական Ժողովն Պօլսոյ մուսակալ զպարտիս Քրիստոնէական անբող լիցի մինչև խոյստ օրինաւ որ առաջարկութեան Հայրապետի իւրոյ և յամասեցի ի կարծիս սխալանաց իւրոյ, զի յակամայս պարտաւորիցոք կազմել զայն ժողով մեծ՝ նախ քան զամենայն զուխտագանցս և զհակառակորդս Եկեղեցւոյ դասել :

Մեր՝ զորովն Հայրական շնորհն մեզ յօդուած առ յօդուած պատասխանել բանից նախնի ձերոյ առ ի ոչ վտացուցանել զիրտս հոգեւոր որդւոցդ, և աւելորդ համարիմք հարցանել եթէ ո՞ւստի ուսոյք թէ ուխտեալ իցէ մեր Եկեղեցին Բերայ, կամ անպեակ գործողութեանց 66 ամի ժողովոյն Պատրիարքարանի, և կամ անփոյթ զարրագրութեանն Պարսիցիոյ, և :

Բողբելիք ի նախակի Ձերում ընդդէմ դաւ և խարդաւանանք բառից, բայց յազապ սխալանաց և յանդուածոց յայնի զոր Եկեղեցւոյ յամենայն զօրութեան և յամենայն անձնէ բողբումն չարդարացուցանէ զք, արդարև զժուարին է մեզ հաւատալ, զի դուք և յո-

զովն որ ընդ Ձեզ յազոգս միտս ինչ հասուցանելոց Եկեղեցւոյ մերում և Ազգի գործեալ իցէ, այլ անստարաւոյս եմք, զի ի գործօրութեանց յայդմիկ դան դաւ և խարդաւանք օտարի, սպետարեր ձեռն օտարի նշմորի սցաւր, ո՞չ երբէք կարծեմք եթէ Հայն փութարացի այնչափ, մինչ զի և յանձն առնուցու վնասել Եկեղեցւոյ իւրոյ և կրօնի ի կործանել զխօսվին զԱզգ իւր յազապային, սակայն ի դատար որ ժամանակաց հեռէ վտարանդի ի շայննեաց վնենն մերազնեաց և ողբմն իւր զխաւթիւնն արար զձայն ինտրալիք ի յոջուղակ ձեռն օտարաց, այս դառնակակիծ մարմարեամբ սրտի անեմք, ո՞չ միայն յաւուրս մեր, այլ ի վստիջուց սնտախ խոստմունք և փաղարչանք նենգամիտ օտարաց յաճախ պատրեցին զմիտս մերայնոց և յաջողեցան բառնալ ի մէջ զխաղաղութիւն և զանդորրութիւն, զրկեցին զձայն, ո՞չ զեղիկել Հայն ի քաղցրիկ Հայրենեաց, յինքնուրոյն ազատութեան ի հարսաւթեանց և յայլոց բազմադիմի բարութեանց և յԱստուածային պարզեաց, զորս պատմութիւնն բացայայտ վկայէ, թէ և զժրազդարար ի ձեռն մերազնից սմանց յառաջաւորաց Ազգիս :

Յորչափ զորեն միտք մեր յօրմէ լինելոյ մերոյ յազապային գործս և ի սպաշտանեալ իբր ի քստատուն և ի չորից ամոց հեռէ քանկցս յազապայնոց ոմանք ունայն յուսով և միամտութար կալան զխարերոյ ձեռաց օտարաց, և ձանաղին փոխիտութիւնս ինչ մեծանել յԱզգային և յԵկեղեցական իրս, զողցե՛ս նշմարելով յայնս փրկութիւն Ազգի, յորս կոչին զարանեալ արդէն կորուստ Ազգութեան, այլ ողորմութեամբ բարձրելոյն Աստուծոյ փառլինն միտաւ տաժմամբ զերծաւ քրտիւն Ազգիս : Եւ ահա ի քանի ամոց հեռէ զարձեալ տեսանի ձեռն օտարին ի մերայինս, դաւ և խարդաւանանք օտարուոյն խառլի, զխաղաղութիւն Եկեղեցւոյ մերոյ, յաջողեալ է նա զբաւել զարս ոմանս խոստանալով զուսոյն և զերձակոյցական բարիս յօդուած Հայ Ազգութեան : Եթէ այս նկատմունք մեր հանդ իրկուցին ի կողմանն Ձերմէ ընդգիտութեան և առաջիք թէ չէք ի մեզ ձեռն օտարի, զժուարին է մեզ հաւատալ, զի եթէ ոչ զոյ շաւթող ձեռն յարտաբնոյ, զի արդ ապա ո՞չ իմանամք զմիտս և զղիտաւորութիւն և զբանս միտեանց, մեք բաղձամք ի սրտէ օր քան զօր սպաշտութեան և յառաջադէմն զարդացման Ազգիս :

... և Երազյաւոր Մասիսի հրատարակած օրինակին ճշգրտութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պատրիարքարանէն պաշտօնապէս տրուած է օրինակը Մասիսի խորհրդարանին, ինչպէս որ նոյն ինքն խորհրդարանը ծանուցած է Պատրիարքարանէն ստանալու : Պէտք է գիտնալ որ Ընդհ. Ժողովը հոս Վարչութիւն կը գումարուի միշտ գիւրութեան համար . իսկ մեր բարձր մայր տունները Պատրիարքարան են . եթէ հոս գումարուած ինչէր Ընդհ. Ժողովը, գիւրին էր բնագիրն անմիջապէս ներկայացնել և կարգալ :

ԽՈՐԷՆ ԵՊԻՍ. — Ես հարցում մ'ըրի և ընթացիկէ ո՞վ կ'երազյաւորէ Մասիսի մէջ հրատարակելու օրինակին վաւերականութեան, եթէ Ս. Պատրիարքը կամ Քաղ. Ժողովոյ ատենադպիրն որ ներկայ է, երազյաւորեն, կըրնանք ասպնոյ ըլլալ :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — (Յանուն Քաղ. Ժողովոյ) . Յայտնի բան է որ Վարչութեան անդամները չեն կրնար կանխաւ ըսել թէ ճիշդ է . կարգացուելն ետեւ եթէ հարցուէր, կըրնայինք որոշ պատասխան մը տալ . ուստի առանց ընթերցման ինչպէս կարելի է երազյաւորել :

ԽՈՐԷՆ ԵՊԻՍ. — Եւսուցիական էֆ. արդէն իւր տուած մեկնութեամբ Ատենապետ էֆէնտի խօսքին կը հակառակի և կ'ըսէ թէ կորուցուելէ ետեւ պիտի խնայանք ինչ ըլլալը, մինչդեռ Ատենապետ էֆ կըսէր թէ պաշտօնական է Մասիսի հրատարակածը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ազգին կողմէ Վեհ. կաթողիկոսին գրուած կարեւոր նամակ մ'է այն, որուն օրինակն ուրիշ թերթեր ալ հրատարակեցին . մինակ Մասիսն է որ կըսէ թէ ուղղակի Պատրիարքարանէն ստացայ օրինակը : Ըսել է թէ Մասիսի խորհրդարան արդէն երազյաւորած է :

ԻԻԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Իբրև Խորհրդարանի Մասիսի) . Ս. Պատրիարքի կողմէն ստացած ու հրատարակած եմ վաւերական օրինակը, և հրատարակուելն ետեւ ոչ ոք ըսած է թէ նըշանախոսք մը անգամ տարբեր է . կը հարցնեմ Ս. Պատրիարք Հօր, եթէ տարբերութիւն մը տեսած է թո՞ղ յայտնէ :

ԽՈՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Խորհրդարան երազյաւորութիւնը չէ մեր մնտածը . եթէ այսպէս ելեւստիսան խորհրդարանը երազյաւոր-

ութեամբ տպելու գիրերը կարգացուն ընտրութիւնը, ես ալ քանի մը յօդուած կը հրատարակեմ և կը բերեմ : Եւսուցիական էֆ. չ'երազյաւորեց, Ս. Պատրիարք չ'երազյաւորեց, որոնք է :

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — (Ընդմիջելով) Կերտշխաւորեմ ճշգրտութեանը, թո՞ղ կորուցուի :

Հետեւապէս ընդ երազյաւորութեամբ Ս. Պատրիարք Հօր կը կարգացուի Մասիսի հրատարակած Վարչութեան նամակին օրինակը, որ է հետեւեալը .

Ա. Ահապատ Տ. Տ. Գեորգ. Գ. Սասունաւորեալ Հայրապետ և կաթողիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն Պատրիարք մայր Աթոռոյն Ս. Էջմիածնի .

Վեհափառ և Աստուածաբնալ Հայրապետ .

Մինչդեռ կիլիկիոյ կաթողիկոսական վեհապետութիւն ծագած վեց տարուան կնճառից խնդրոյն յաջողութեամբ լրանալուն և բնդարձակ վիճակի մի խաղաղելուն, մանաւանդ Հայաստանեայց եկեղեցւոյ միութեան և ամբողջութեան սպառնացող վատնազին անհետելուն վտրոյ՝ Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոց հարազատ որդիք կը բերկրէին, և խաւար ծամանակներու արդիւնքն եղող պաշարեալ յարարութեանց վերահասաատութեան սկզբնաւորութեան ծանր հասած կը նկատէին, և Ազգային Վարչութիւնն յատեննի անդ Ընդհ. Ժողովոյ կը յայտարարէր թէ յարարութեանց խնդրոյն մէջ Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին հետ պիտի բանակցուի և ըստ այնմ միաբան հաւանութեամբ պիտի կարգադրուի, յանակնկալս կը հասնի առ Պատրիարքն Աստուանդուզօրոյ Չերդ վեհափառութեան մէկ հեռագիրը, որով եղած ընտրութենէն դժգոհ՝ կը գանդաւի Կ. Պօլսոյ Ընդհ. Ժողովէն, իբրև թէ իւր ձեռնահասութեանէն վեր խնդրոց միջամտելու եղած լինէր, և սպառնային համար զգուշութեան հրաւեր կը կարդար Ս. Հարց աւանդութիւններէն չը խտտուելու :

Թէպէտ և Պատրիարքական հեռագիր մի անմիջապէս ասպնոյց թէ խնդիրը բարձրովին իւր նպատակին հակառակ մեկնուած է Չերդ վեհափառութեան, և մինչդեռ կը պատրաստուէր կանխաւ եղած որոշման համեմատ այս կաթողիկոսութեան կնճառից խնդրոյն օրինաւորապէս լուծման և ասպնոյցին մէջ վե-

րուաին չ'կարենալ ծագելուն համար պէտք եղած կարգադրութեան բոլոր հանդամանքներն 'ի միասին ամբողջապէս ընդարձակ տեղեկագիր մը ներկայացնել Վեհափ. ահա Ս. Էջմիածնի և Արարատ . ամսաթերթին գեղատեսիլ ամսոյ թիւը կը հասնի, և այս խնդրոյն վրայ յատկապէս գրուած յօդուածի մի, նոյնպէս և առ Եւրոքնտիր կաթողիկոսն կիլիկիոյ ուղղապէս կոնգրակին մէջ այնպիսի ակնարկութիւններ թէ՛ առ կեդրոնական վարչութիւնն և թէ՛ առ Ազգային Ընդհ. Ժողովն կը սարունակէին, ուրոց դէմ անհնար է Ազգային Վարչութեանս ըսել, և կը փութայ նախ և առաջ բողոքել այն զրպարտութեանց դէմ որ կրցելու են մինչև առ Չերդ հասնիլ, և յայտնել Չերդ վեհափառութեան մեր սրտին ցաւերը՝ իբրև որդի առ Հայոցն : Այո՛, Վեհափառ Տէր, Ազգային վարչութիւնը պարտք կը համարի մերժել իւր բոլոր զօրութեամբ, դաւ և խարդաւանանք, բաւերը, զորոնք ոչ ոք իրաւունք ունի գործածել Վարչութեան անօրինութեանցը և Կ. Քեփոսի . ժողովոյ շարժմանցը համար . բողոքել այնպիսի զրպարտութեանց դէմ, որոնց ցաւալի ազդեցութիւնը միայն կրցած է պատճառ ըլլալ այն ոգւոյն ու ձեւերուն՝ որ առաջին անգամ մուտ կը գտնեն Համազգական Աթոռոյ շխանական դրութեանց մէջ, այդ զերպարտութեանց դէմ, կըսենք, Ազգ. վարչութիւնը բաւական կը համարի ներկայացնել Վեհափառութեանը եղելութիւնը իւր բոլոր պարզութեանը մէջ :

Վեց տարիէ 'ի վեր կեդր. վարչութեան գայթ 'ի գայթ վիճակը, Սահմանադրութեան անժամանակ դադարուած և Պատրիարքական խնդիրները հետզհետէ ծանրանալով, ոչ երբէք պատեհութիւն և միջոց տուին կիլիկիոյ ինչպէս նաև Աղթամարայ վիճակայնոց՝ կաթողիկոսական խնդիրն ըստ արժանւոյն նկատողութեան առնուլ, և կիլիկիոյ ինքնընտիր և անվաւեր կաթողիկոսը (Նիկողոս), կեդր. վարչութեան անկերպարան վիճակէն օգուտ քաղելով, յաջողած էր երթալ 'ի Սիս, և անվաւեր ձեռնադրութիւններ ընելով՝ ժողովուրդը գայթակղեցնել, Ազգը սխառակուել և հազարաւոր հայ ընտանիք հոգեւորապէս 'ի կորուստ մատնել : Ահա Ազգ. վարչութիւնս այսպիսի վիճակի մը մէջ դտաւ կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրն ու թեմը, երբ սպառնոյն կոչուեցաւ : Երթալով ծանր կերպարանք առած և Հայաստանեայց եկեղեցւոյ միութեան

և ամբողջութեան սպառնացող այն ծանրակը չլու խնդրոյն մէջ Ազգ. վարչութիւնը սարժած ծանօթ կը համարձակի ըսել թէ արժանի քաջութեամբ և նախանձախնդրութեամբ վարուեցաւ :

Կիլիկիոյ ինքզինքն անկախ ամբողջ մի կը նըկատուէր մինչև հիմայ, և վտանգն այդ անկախութեան մէջ էր : Հիմայ Պօլսոյ կեդր. վարչութեան ենթարկուեցաւ, Պօլսոյ՝ որ Էջմիածնայ թեմն է : Այս է ահա՛ այն առաջին և մեծ արդիւնքը, զոր ձեռք բերելու համար յատկապէս զգուշութիւններու հանդիպեցաւ, և վերջապէս յաջողեցաւ իր դատար յաղթող ընելու Օսմանեան բարեխնամ Տէրութեան առջև, յաջողեցաւ վիճակային Համազգումար ժողովոյ տրուած և Երեսօրհանական ժողովոյ հաստատած (1886 ին յուլիս 22 ին) վճիռը գործադրել տալ յանձին Նիկողայոսի, որ շատ ջանաց ընդվզել կեդր. վարչութեանս իրաւասութենէն, անկախ ենթադրելով զինքն Ս. Էջմիածնի կաթողիկոսական իշխանութենէն և նորա փոխանորդական սպառնուելենէն : Նիկողայոս եպիսկոպոս ստիկանութեան միջոցաւ բերուեցաւ Սիսէն և արտոնեցաւ յԱրմաշ : Անմիջապէս կիլիկիոյ կաթողիկոսութեան համար նոր ընտրութեան ձեռնարկուելով՝ Վարչութեան կողմանէ Գեր. Սիսեոն եպիսկոպոս և Ֆրէնկեան Յովհաննէս էֆէնտի տեսուչ նշանակուեցան, և անցեալ նոյեմբերի մէջ կաթողիկոսական ընտրութիւնը թեմական Ընդհ. Ժողովոյ միջոցաւ կատարուելով, Տ. Մկրտիչ Արքայան արքեպիսկոպոսը կիլիկիոյ վիճակին կաթողիկոս ընտրուեցաւ, որ և կեդր. Ընդհ. Ժողովէն ալ վաւերացաւ : Ինչպէս յայտնի կերևի Ընդհ. Ժողովոյ Լ.Գ. նիստի ատենագրութենէն, միայն չորս երեսօրհանք ընդդիմացան Սոյ կաթողիկոսին ընտրութեան վաւերացմանը՝ առարկելով թէ նախ յարարութիւնք պէտք էին հաստատուիլ :

Յակայն Ազգ. վարչութիւնս մէկ կողմէն նկատելով Նիկողայոսի և անոր կուսակցաց մեքենայութիւնները, և միւս կողմէն նկատելով որ յարարութեանց խնդիրն երկար բանակցութեանց պէտք ունի, և կիլիկիոյ թեմականաց անհնար պիտի ըլլայ այլ ևս հանդուրժել իրենց կաթողիկոսական խնդրոյն առ կախ մընալուն, յարարութեան մասին Սոյ նորընտիր կաթողիկոսն կանխաւ ընդունելութեան խոստմանգիր առնելով նախ վաւերացումն ա-

առաջարկեց ընդհ. ժողովին՝ որպէս զի Արևիկի-
ոյ յուզեալ և տատանեալ վիճակը հանդարտե-
լէն ետքը՝ ընդհանուր յարաբերութեանց դոր-
ծին ձեռնարկուի, և ժամանակ ու միջոց ըլլայ
արդէն սկսուած այն գործին վրայ Չեր Վե-
հափառութեան հետ բանակցելու:

Տարակոյս չկայ թէ Չեր Վեհափառութիւնն
ալ ընթեռնելով նոյն նիստին ատենագրութիւնը,
պիտի համոզուի թէ ո՞րչափ անհիմն է ընդդի-
մադիր մասին երկիւղը, ըստ որում թէ՛ Ազգ.
վարչութեանս և թէ՛ Երեսօ. ժողովոյ համար
յարաբերութիւնը Արևիկիոյ կաթողիկոսին կող-
մանէ ընդունուած կը համարուին, վասն զի
այն որը՝ երբ Արևիկիոյ կաթողիկոսն իր խոստու-
նադիրը դրժէ և սահմանելի յարաբերութիւն-
ք չընդունի, և կամ նոցա դէմ վարուի, ան-
տարակոյս ամբաստանութեան տակ կ'ընկայ, և
ի պահանջել հարկին՝ մինչև անգամ իր զառ-
րի իր պաշտօնէն: Չենք յուսար թէ Չեր Վե-
հափառութիւնն համարուած ըլլայ որ Սոյ կա-
թողիկոսին վաւերացումը Ազգ. ընդհ. ժողո-
վէն ըլլալով Սիւր բարձրացած համարուի.
Վասն զի Չեր Վեհափառութիւնը գիտէ արդէն
թէ ոչ միայն վաւերացումը այլ և ընտրութիւ-
նըն անգամ ընդհ. ժողովն պիտի կատար-
ուէր ըստ 1868 յուլիս 22 ի որոշման վիճակային
Համագումար ժողովոյ և Ազգ. ընդհ. ժողո-
վոյ: Բայց որովհետև ասան անցնելով զանա-
պան նորանոր դէպքեր խնդրոյն վիճակը կեր-
պարանափոխ էրն ըրած, Վարչութիւնս խո-
հուն կանխադրուելեամբ պատշաճ գատեց
այն որոշումը գործադրելէ առաջ՝ անցնել տա-
րի մի անգամ ևս ընդհ. ժողովոյ ատենանը հա-
նել, որ վեց եօթն նիստ շարունակ գրադելէ և
խնդրոյն ատեն կէտերը կատարեալ ուշադրու-
թեամբ ըննելէ ետև՝ որոշեց ընտրութիւնը գա-
ւառին տալ և վաւերացումը կեդրոնին վերա-
սլանել և այն ալ ընդհ. ժողովով:

Ուստի անոնք որ Սոյ կաթողիկոսը գատ
դուիս և Սոյ ժողովուրդը գատ ժարմին չ'ը-
հատեալու երկիւղով ընտրութիւնն ալ Սոյ վի-
ճակայնոց ցուցած ընտրելեաց ցանկի մի վրայ
ընդհ. ժողովով ընել կուզէին, վաւերացումը
ալ նոյն սպառնալովութիւնը ձեռք բերած համա-
րեցան, վասն զի ընդհ. ժողովով ըլլալով ամէն
տնօրինութիւն՝ միշտ ժողովուրդեան և ընդհա-
նուր ազգին համար սպառնալովեան միջոցնե-
րը բնականաբար իր հետն ունի, և որ և է
երկիւղի կամ կատկածի սեղել չ'մար: Ապա-

դային մէջ ալ սոյն խնդիրն իր վտանգաւոր
դիրքը կորուսած է՝ վաւերացումը ընդհ. ժո-
ղովոյ վերապահուած լինելով, որ ըսել է ընդ-
հանուր Թուրքիոյնակ Հոյոց՝ գիտութեանս
և ժողովուրդեան աչացն առջև տնօրինելի խն-
դիր մ'է: այն ժողովուրդեան ուր տէրն է Աթո-
սոց և պահանջան անոնց վրաւատութեան:
Չենք յուսար նաև թէ Չեր վեհափառութիւնն
համարալ գրածուի սոյն կարծեաց թէ թող
տալու էր Սեպուց որ ինքնազուխ ընտրելին
իրենց կաթողիկոսը և վաւերացնել տային: սոյն
ընտրելու չեմք դիտել թէ ինչ միջոց ձեռնին
իրենց ձեռքը ապագային մէջ վտանգի տակ
չը ձգելու: Հայնստանեաց եկեղեցւոյ միութիւ-
նըն ու ամբողջութիւնը՝ մինչդեռ Արևիկայոյ
և իւր կուսակիցներն ալ միեւնոյն միջոցով կը
ջանային ճողովուրդը Ազգ. վարչութեան Գրա-
ւասութեանէն: Այլ Չեր վեհափառութիւնը կը
զանգատի թէ ինչո՞ւ ի Ս. Եջմիածին ձեռ-
նադրեալ կաթողիկոս մը Սոյ կաթողիկոս
կ'ընտրուի:

Այս մասին՝ Իրաց ատենալ ամենայն զգուշ
ճառարանութիւնը, անշուշտ Չեր վեհափառու-
թեան ուշադրութեան վրայած են նաև վի-
ճակային Համագումար Ժողովոյն Սոյ և Ազ-
թամարայ համար սկստրաստած կաթողիկոսա-
կան ընտրելեաց ցանկերը, յորս անխորհր
Հա-
յատանեաց եկեղեցւոյ եպիսկոպոսուք եւ
վարդապետը ընտրելի ներկայացնել էին: ինչ-
պէս Ս. Եջմիածին ձեռնադրեալ Սրբառակի-
կաթողիկոսը Սոյ Աթոսոյն համար, և Թե-
փուղեան Յակոբ եպիսկոպոսը Աթամարայ Ա-
թոսոյն համար, և Չեր վեհափառութիւնը՝
մինչդեռ ի Պոլիս էր, ոչ միայն ասոնց վրայ
գիտադութիւն մի չ'ըրաւ, այլ նաև յետ ըն-
դունելոյ պաշտօնատէս սոյն երկու Աթոսոց
ընդ Մայր Աթոսոյ յարաբերութեանց ծրարի-
րը, որ եկեղեցական Յանձնաժողովով մի պատ-
րաստուած էր, և որուն մէջ յայտնի գրուած
էր թէ Սոյ Աթոսոյն վրայ Ոջապահեանց գեր-
դաստանին ունեցած ժառանգական իրաւուն-
քն ազգովին ընտրուած և արժանաւորաց և
եթ սրահուած է, երբէք չը մերժեց այս սկիւղ-
րուքը:

Արդ՝ յայտնի կերևի ներկայ բացառու-
թիւններէն, որ Ազգային վարչութիւնս ինչ-
պէս նաև Ս. Պոլսոյ Ազգային կաթողիկոս ժողո-
վը, ոչ թէ մեղանցած է Ս. Եջմիածին Սոյ
Աթոսոյ իրաւունքը գէ՛մ, ընդհակառակն անար-

գերագահութիւնը պահպանելով՝ Հայաստան-
եայց Ս. Եկեղեցւոյ միութեան և ամբողջու-
թեան սպառնացող վտանգին առջև սուած,
և Սոյ անկախութիւն սպառնացող դիրքը օրի-
նաւոր սահմանի տակ մտցնելով՝ ապագայն իսկ
սպառնալով յաջողած է:

Մեր նախորդ պաշտօնակիցները՝ Սոյ եւ
Աթամարայ վիճակներն ալ Չեր վեհափա-
ռութեան իբրև ընդհանրական կաթողիկոսի
ընտրութեան մասնակցել տալով՝ մեծ քայլա-
վախ մ'առնել տուած էին եկեղեցւոյ միութեան
ապացոյցին: Արևիկիոյ թեմակառնը զայն
ատենը պարզեցին՝ ի Ս. Եջմիածին ձեռնադ-
րեալ կաթողիկոս մի անխտրութեամբ իրենց
թեմին կաթողիկոս ընտրելով, զոր նուիրա-
գործեց Ազգային Երեսօրոսանական ժողովն
այդ ընտրութիւնը վաւերացնելով, որ Հայաս-
տանեայց մի սուրբ և առաքելական եկեղեցւոյ
ամբողջութեան յաւիտենական վկայութիւնն է:

Արդ՝ որովհետև Ազգ. վարչութիւնս ա-
պահով է թէ Չեր վեհափառութիւնը ներկայ
յայտադիրս կարդալէ և ընդհ. ժողովոյ Ատե-
նադրութիւններն ալ ուշադրութեան առնելու
բարեհաճելէ ետքը՝ բացայայտ պիտի տեսնէ
թէ ինչ է այն սղւոյն շարժառիթը՝ որ քանի
տարիէ ի վեր վարչութեան ատիթ մի չ'կորսն-
ցնելը կեդր. վարչութիւնն անդադար գրադար-
տելու, իւր բոլոր սղւոյն մտածութիւններ
ը շարաշար մեկնելով, և որ ամենէն քստմիտ-
լին է, նոյն իսկ Չեր վեհափառութիւնը խա-
րելու յանդգնելով. . . աւելորդ կը համա-
րիմք այլ ևս երկարել այս մասին վրայ:

Գալով յարաբերութեանց խնդրոյն, Ազգ.
վարչութիւնս մեծ ցաւօք կը խոստովանի թէ
իր կազմութեան առաջին օրէն սարսուտ էր
սոյն խնդրոյն մ'ջամտել. բայց չը կրցաւ, և
դատմաւն յայտնի է՝ արդէն 1863 էն սողին
Ազգ. վարչութեան խանդարեալ վիճակէն
պատճառեալ այնչափ ազգային գործեր եւ
խնդիրներ կային գրեալ, և մանաւանդ Նի-
կոպոստի սպստածը և տղապարծան խորհր-
դոց և ջանից դէմն առնելու այնչափ գրադ-
եալ էր, որ ասոնց զոյն կարգադրելու՝ մե-
ծամեծ արդելքներ կային յարաբերութեանց
խնդրոյն ձեռնարկութեանը: Միւս կողմա-
նէ մեծ յոյս ունեւ որ Չեր վեհափա-
ռութիւնն՝ ըստ առաջարկութեան ազգային Ե-
րեսօրոսանական ժողովոյ որ 1867 յետըմար
և ըստ հանդիսար խոստման և ուրախ Չերդ

վեհափառութեան ի Ս. Երրորդութեան եկե-
ղեցւոյ ի Բերա, ձեռնարկած է արդէն Մայր
Աթոսոյ Հայրապետական անկախութեան և
կաթողիկոսական իրաւատութեան վերահաս-
տատութեան գործին, այն է ընթելու Պարա-
ժէնիա անուն կարգադրութեան այն մասերը,
որոնք կաթողիկոսի ընդհանրական պաշտօնին
կը վերաբերին և գլխովին հակառակ են մեր
սուրբ և ուղղափառ եկեղեցւոյ կանոնաց և ա-
ւանդութեանց: Ուստի կ'սպասէր Չեր վեհա-
փառութեանն ստանալ այս մասին յաջող և
բերկրատիթ լուր:

Ահա այժմ՝ ուրախութեամբ կը տեսնեմք որ
մեր յոյսն ի դերև չէ ելած, զի Չեր վեհա-
փառութիւնը Սոյ կաթողիկոսական խնդրոյն
առթիւ կը բանայ սոյն յարաբերութեանց խն-
դիրը, և իւր հեռագրին մէջ կը ծանուցանէ
թէ իւր նախագահութեամբ գումարեալ եկե-
ղեցական ժողովոյ մը մէջ սլէտք է որոշուին.
Ազգային վարչութիւնս ալ սլտես՝ ատիթը
հասած կը համարի սկիւղն ընել բանակցու-
թեան, հետևապէս կը խնդրէ որ Չեր վեհա-
փառութիւնը բարեհաճի ծանուցանել թէ ո՞ր
և ինչ եղանակաւ այդ ժողովը պիտի գումար-
ուի, և յարաբերութեանց խնդրէն գատ այս
առթիւ եկեղեցական ուրիշ ինչ կարևոր խն-
դիրներ պիտի ներկայանան:

Ասանց կարևորութիւն տալու մասնաւո-
րաց այս խնդրոյս վստայ արտայայտած դադա-
փարներուն, անտարակոյս եմք որ Չեր վեհա-
փառութիւնը պիտի ընդունի Ազգ. վարչու-
թեան հատոյն անդամոց անկեղծ ըզգացմանց
և հաւատարիմ որդեգրութեան հաւատիրոյ,
որը խնդրոյն բնական վիճակը Չեր վեհափա-
ռութեան հայրախնամ նկատուութեանը ներ-
կայացնելով՝ անտարակոյս են որ Սրբաղնա-
գոյն Հայրապետ ալ պիտի համարուի թէ այն
երևակոյեալ բոլոր վտանգներն պիտի ցնդին
յարաբերութեանց խնդրոյն լուծմամբ: որոյ
կարգադրութեան մեծ գործն ի դուրս հա-
նելու փառք՝ և Հայաստանեայց եկեղեցւոյ
հարադատ որդւոց անկախութիւնքն ու իզժը
պսակելու սրածանրը՝ Չեր վեհափառութեան
պահուած է:

10 Մարտ 1872 Մնասք միշտ Չերդ
ի Պատր. Հոյոց վեհափառութեան
ի Կ. Պոլիս ամենախոնարհ ծառայք
Գ. Կ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱՐՔԱՊԵՏ
ԻՐԻՄԵԱՆ ԱՐՔԵՊԻՍ ԳԼԱՍԻԱՅ Վ. ԱՆՈՒՅ

Ի Ղախց Բաղ. Ժողովոյ
Ատենադպր. Ատենադպր
Տ. Ռ. ԵՌՍՈՒՅԵԱՆ Ս. ՌՊՐՕ

ԻԿԻՏՊԼԵՆԱՆ Ա. ԷՖ. — Պէկեան էֆ. Իրաւունք ունի որ ճիշդ օրինակը չէ բերու. որովհետեւ վեհ. կաթողիկոսի կողմէն չի ստացուած և այս նախնական :

ԻՍՏԱՍՈՒՅԵԱՆ Օ. ԷՖ. — Արիւն գրուած թիւներն ալ կարողացուցան. սակայն գործնականին այն է որ Պատրիարքարանի կողմէն զրկուած գրութիւնը միայն Քաղ. Ժողովոյ անդամաց ստորագրութիւնը կը կրէ, և կրօն. Ժողովինը թէ՛ մինչդեռ խնդրել կրճատուան է. ուստի կառավարիւմ որ այդ գրութիւնները կրօն. Ժողովոյ դատան, և անոր տեղեկագրովը նորէն հաս դան, զի խնդրել կրճատուան է :

ԻԲԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ոչ, կրճատուան չէ սակ քաղաքական խնդիր է :

Որ ինչներ ալ կը ձայնակցին Իփէկեան էֆ. Ի այս խօսքին :

ԱՍՏՐԷՆՍՍ ՎՐԳՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Վեհ. կաթողիկոսին գրուած նամակը կրօն. Ժողովոյ կողմէն չէ ստորագրուած, վասն զի այն ատեն կրօն. Ժողովը առկա չէր կազմուած, և բնականաբար Քաղ. Ժողովը միայնակ իր վրայ առած էր այն գործը : Եթէ կրօն. Ժողովոյ դարձաւ այս խնդիրը, ինչպէս կառավարիւմ, չեմ կարծեր որ կրօն. Ժողովը իւր վրայ առնու կատարուած գործ մը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Օգտէն էֆ. զարմանալի գիտողութիւն մը կրնէ. ինչ հարկ կայ խնդիրը կրօն. Ժողովոյն դարձնելու քանի որ ընդհ. Ժողովոյ մէջ յուզուած որոշուած և լինած է, և Քաղ. Ժողովը ալ ըստ այնմ տեղեկագրած է առ վեհ. կաթողիկոսն. միթէ՞ կրօն. Ժողովը այս ընդհ. Ժողովէն չէ ընտրուած, միթէ ընդհ. Ժողովն ամենէն մեծ Ժողովը չէ, և անոր մէջ կրճատուաններ չը կան : Չեմ կրնար բնական ըր որ Քաղ. Ժողովոյ ըրածը պիտի կցնելու համար կրօն. Ժողովոյ զրկուի այս խնդիրը :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ըստ որում որոշուեցաւ որ այսօր վիճարանութիւն չըլլայ այս խնդրոյն վրայ, կառավարիւմ որ խնդրոց կարգըն անցնի, այն պայմանաւ որ Ատենադպրութեան տպագրութիւնները հասնին մինչև յայտնուած օրը :

Յորդ. Նիստին. այն ատեն պիտի տեսնուի թէ Քաղ. Ժողովը իրաւունք ունի թէ չ, նայնպէս հարկ է թէ ոչ այս խնդիրը կրօն. Ժողովոյն դարձնել, ինչպէս կառավարիւմ Օգտէն էֆ. :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որում նորէն խնդիր կ'ըլլայ վերջին մէկ քանի նիստերուն դեռ ի լոյս չ'ընծայուած ատենադպրութեանց տպագրութիւնը յաջորդ նիստին հասցնել, Վիւանը պարտք կը համարի յիշեցնել որ ներկայ նիստն ալ ի հաշիւ առնելով վեց ատենագրութիւնք կան տպագրելի, որոնց մէկ մասն Ատենադպրութիւն էֆ. ի ըրով է, բայց հիւանդ ըլլալուն պատճառաւ դեռ ի լոյս երած չեն : Իսկ վերջին մէկ քանի ատենագրութիւնք՝ որ իրարու հետ սերտ յարաբերութիւն ունին, ամենը մէկէն հասցնելու համար պէտք է Ժողովոյն յաջորդ նիստը քիչ մը ուշ ձգել. ապա թէ ոչ չը կրնար հասնիլ և Վիւանը պատասխատու չը կրնար ըլլալ այս մասին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ատենադպրութիւն կայ, որոնց մէկն արդէն տպագրութեան տրուած ըլլալը լսեցինք. անոնց պատասխանն անկէ կուզենք : Իսկ մնացած 2 նիստերու ատենագրութիւնք՝ ըստ որում Մէրեւիմ-Պուլի էֆ. ներկայ չէր, իրաւունք չունինք անկէ ուզելու, այլ անոնց մէկը կրճատուան էֆ. նախնին և այսօրուանը Պատենադպրութիւն կը պահանջենք :

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Նախընթաց նիստէն խօսք ուզողաց ցանկը ներկայացնելով, կը յայտարարէ թէ նոյն ցանկին մէջ գտնուող ատենադպրութիւնք, որոնց առաջինը Պատենադպրութիւն է, կարգաւ խօսք պիտի ասոյ Քաղ. Ժողովոյ ընտրութեան խնդրոյն վրայ :

Այս միջոցին Պատենադպրութիւն էֆ. տեղէն կեղծ, և կրճատուան էֆ. կը յաջորդէ Վիւանին Ատենադպրութիւնն ընելու :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Քաղ. Ժողովոյ ընտրութեան վրայ իմ կարծիքս ասկէ առաջ համառօտիւ յայտնած և առաջարկած էի այնպիսի կերպիւ կազմել Քաղ. Ժողովը՝ որ որ և է, կառավարութեան գրութեան

և օրինաց յարմարի : Ար տեսնեմ որ այս խնդիրն այսօր վիճարանութիւն կ'ունի տակաւին ստորագրուած չէ, թէ և ըստ խնդրան յատարար խնդիր մ'է : Երեսօթիւններէն ամենք կը պնդեն որ Քաղ. Ժողովն ըստ արամագրութեան Սահմանագրութեան 20 հոգիէ բաղկանայ և ընտրութիւնն ընդհ. Ժողովն լինի : Ասոր արդիւնքն ուրիշ բան չը կրնար ըլլալ, եթէ ոչ հակասեալ տարրերէ բաղկացանք Ժողովը : Այն վիճարանութիւններն որ ընդհ. Ժողովոյ մէջ կ'ըլլան, պիտի կրկնուին նաև Քաղ. Ժողովոյ մէջ առանց գործ մը տեսնել կարող ըլլալու : Առարկութիւն եղաւ թէ ժամանակաւ զերազոյն ժողով մը կար 20 անդամներով, որ միշտ մեծագոյն մասով նիստ կը կազմէր. եթէ անցելոյն վրայ քիչ շատ անդամութիւն ունինք, և եթէ չեմ տեսնել, կարծեմ որ այն ժամանակի զերազոյն ըստած ժողովներուն մէջ միայն մէկ երկու հոգի էին գործող, միւսներն առանց կամք յայտնելու լիկ արձագանք կամ արբանեակներ էին մէկ քանի ամիսացից. բայց մեր արդի Քաղ. Ժողովներն այնպէս չը պիտի ըլլան : Քաղ. Ժողովոյ մէջ ամեն անգամ իրաւունք ունի ըստարանուելի անդամին խնդրոց վրայ և խնդիր մը լուսարանելէ ետեւ պիտի ներկայանայ ընդհ. Ժողովոյ կամ կառավարութեան. բայց հարկ է որ Վարչութեան ժողովը մը պատասխանատուութիւնը պարզ լինի. քանի որ պատասխանատու է Քաղ. Ժողովը : 20 ի հարկ չըլլայ, թիւը քանի ալ ըլլայ միւսնայն է. մասնաւոր ո'րչափ քիչ ըլլայ, այնչափ աւելի կը դիւրանայ իւր պաշտօնը. պատասխանատուութեան սկզբունքը ձեռքս առնելով կը տեսնեմ որ երբ, Վարչութիւն մը անհամախառն հակակարծիք տարրերէ բաղկացած է, չը կրնար յստաջ երթալ. իսկ երբ համամիտ լինի կրնայ գործ տեսնալ : Օրինակաւ բացատրեմ ըսածս. այսօր լրագիր մը կը կարգայի, որ կը ծանուցանէր թէ Գաղղիոյ մէջ Պետական խորհրդոյ կազմութեան վրայ վիճարանութիւն մը բացուեց : Երբ և նման մեր վիճարանութեան. Գաղղիոյ մէջ պետական խորհրդոյ մը կար որ Հասարակապետութեան կառ ջնջուեցաւ, և կառավարութիւնը կուզէ զայն վերակազմել. չը մտնանք ըսելու որ եթէ մեր Քաղ. Ժողովը պետական խորհրդոյն հետ բաղդատենք, կրնան զուգակընու զալ : Գաղղիոյ կառավարութեան առա-

ջարկութիւնը Երեսօթի. Ժողովոյ ներկայացեր է. այն երեսօթիականներն որ նախորդ կառավարութեան օրով ընդգրկուող ժողովն էին և կուզէին որ կայսրն ընտրէ, հիմա կը պնդեն եղեր որ Երեսօթի. Ժողովն ընտրէ. իսկ համարակետականներն կուզեն որ կառավարութիւնն ընտրէ : Բայց մեծագոյն մասն այս խնդրի և տրամաբանութեան գէ՛մ եզրած առաջարկութիւնը չընդունելով որոշեց է որ Երեսօթի. Ժողովն ընտրէ : Մեր մէջն ալ ընդգրկուող ժողովը կը կուզէ թէ Քաղ. Ժողովը գործադիր չէ, այլ սրբազ և խորհրդ ժողով մը. եթէ գործադիր իշխանութիւն համարենք Քաղ. Ժողովը, սէտք է Վարչութեան զլինն ընտրուի այն պայմանաւ որ պատասխանատու ըլլայ Երեսօթի. Ժողովին, և եթէ միայն խորհրդական համարենք դարձեալ սէտք է Վարչութեան զլինն ընտրէ միւսնայն պայմանաւ : Այսին թէ պատասխանատուութիւնն ազէկ որոշուած չէ. եթէ մեք ընտրենք, բոլորովին շիտուած պիտի ըլլայ պատասխանատուութիւնը. ո'րքան պարզուի պատասխանատուութիւնը այնքան ազէկ կը քայլ մեքենայն. վերջապէս ո'ր կողմ դառնանք՝ կը տեսնեմ որ հակառակութեան օգիտէ գատ բան մը չըլլայ : Այլէ առաջ Պատրիարքարանի ժողովն իրր հակակրօն մը կը համարուէր Պատրիարքի իշխանութեան. այն, Սահմանագրութեանն առաջ հակակրօն մ'ունենալու պէտք կար, բայց հիմա այն պէտքը վերցած է. զայն մէջ բերել ուրիշ բան չէ, եթէ ոչ արդէլը լինիլ Պատրիարքի իշխանութեան և Քաղ. Ժողովոյ դէմ, և այս ալ ուրիշ արդիւնք չը պիտի ունենայ, բայց եթէ այն վիճարանութիւնն որ ներկայ է ընդհ. Ժողովոյ մէջ, աններկայ կերպարանք մը պիտի առնու Քաղ. Ժողովոյ մէջ, ներկայ Սահմանագրութեան մէջ Քաղ. Ժողովոյ թիւը 20 գրուած է և ընտրութիւնն ալ Երեսօթի. Ժողովոյն տրուած. և սակայն առջի Սահմանագրութեան մէջ փետուցի և չը գտայ այդպիսի տրամադրութիւն մը : Եթէ կուզենք գործող Վարչութիւն մը ունենալ, որն որ պատասխանատու լինի մեզ, պէտք է Սահմանագրութեան նոյն յօդուածը հիմակուել սրբադրենք, փոխենք և ուրիշ այնպիսի յօդուած մը դնենք, որ աւելի գործնական և ընթացիկ լինի : Ենթադրելով որ ընդհ. Ժողովն ընտրուենք Քաղ. Ժողովոյ 20 հոգիէ ըլլալու առաջարկութիւնը, այսպիսի պարագայի մը մէջ սէտք է որ ունենալու առաջար-

կուխիւնն ընող մասէն ընտրուի գործադիր վարչութիւնը . Երեսօխտանք ոմանք ինքնին հակասութեան մէջ կ'ընան իրենց առաջարկութեամբ : Ես կառավարիւմ որ քաղ . Ժողովոյ ընտրութեան վերաբերեալ Սահմանադրութեան յօդուածը սրբազրուի գործնական եղանակաւ մը : այսինքն պատասխանատու ըլլալու սրայմանաւ . Ընդհ . Ժողովը քաղ . Ժողովոյ Ատենապետ մ'ընարէ , և անիկայ իւր ընկերներն որոշելով անոնց ցուցակը ներկայացնէ , և Ընդհ . Ժողովն ալ վաւերացնէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — Այս նիստը նախորդին շարունակութիւնն է . նախորդին մէջ Օդէն էֆ . Երեսօխտէմայ խնդրոյն դէպքը մէջ բերաւ և յիշեցուց որ թագրիւր մը գրուեր է Պատրիարքարանէն : Ասոր դէմ Երեսօխտեան էֆ . սրատասխանեց թէ սխալ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — (Ընդմիջելով) Վիճարանութեան շրջանէն կը շեղիք . խնդիրը քաղ . Ժողովոյ ընտրութեան վրայ է , դիւանը կը պարտաւորի հրաւիրել որ բուն խնդրոյն դառնար :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — (Հարունակելով) Դիւանը թղթաւորութիւն ըրած էր նախորդ նիստին՝ երբ վերջիչեալ դէպքը մէջ բերուեցաւ և Երեսօխտեան էֆ . միայն սխալ է ըսելով անցաւ , պէտք է որ բացատրութիւնը սոց . խնդիրը մեծ և կարեւոր է , նոյն խնդրով . Ժողովոյ մեծամիտ և վարժապետ ըլլալէն յառաջ եկած է .

Ատենապետ էֆ . դարձեալ ընդմիջելով կըրկին կը հրաւիրէ զառնարանն 'ի կարգ խնդրոյն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — (Հարունակելով) Ըսին թէ քաղ . Ժողովն երբ 20 հոգիէ բաղկանայ , գործ չըկրնար տեսնել . սխալ է . միջբարձիւ քաղ . Ժողովն ոչ թէ օգտակար , այլ մտասակար եղած է . թող քննուի այս կէտը . ես փորձով գիտեմ որ 20 հոգիով քաղ . Ժողովը կրնայ գործ տեսնել և շարունակել . Ըստածիս ապացոյց կը բերեմ այն քաղ . Ժողովը որ 20 հոգիով ընտրուած և իւր պաշտօնը շարունակելու վրայ էր , և եթէ անժամանակ դադրեցաւ իւր պաշտօնէն , պատճառը մէկ քանի անձանց հակառակութիւնն էր , որ ի . Դունէն դադրեցնել տուին :

Քիչօրք չըկրնար շատօրին գործը տեսնել . ես իմ վրայ խօսելով կըսեմ թէ արդի

Տնտեսական Խորհրդոյն անդամ եղայ , ճ հոգիով մնացինք , խղճովս կը վկայեմ որ չը կըրցինք պէտք եղածին չափ գործել և մեր պարտքը կատարել . Պատենասեան էֆ . կրէ թէ քաղ . Ժողովն երբ տարբեր տարրերէ կազմուի , չը կրնար գործ յառաջ տանել սխալ է այս . քաղ . Ժողովը գործադիր պաշտօնէութիւնն է , Ընդհ . Ժողովոյ մանրանկարն է , որչափ վիճարանի այնչափ աղէկ է : Դարձեալ Պատենասեան էֆ . կրէ թէ Սահմանադրութեանէ առաջ Ընդհ . Ժողով չը կար , և Աղղը քաղ . Ժողովը իւր հակակիտ դրած էր Պատրիարքի իշխանութեան դէմ . այս ալ սխալ է . այն ատենները դարձեալ այս Ընդհ . Ժողովը կար , նոյնպէս քաղ . Ժողով և Տեսուչ խորհուրդներ կային . գործադիր պաշտօնեաներն են Պատրիարքը , Փոխանորդը , Գարու քննչեստին , Եւ և ասոնց ամենուն վրայ հսկողն է քաղ . Ժողովը :

ՕՍԿԱՆԵԱՆ Խ . ԷՖ . — Յարգոյ պաշտօնակիցներէս մին իւր ատենարանութիւնն սկսաւ ըսելով թէ խնդիրը պարզ է . այն' ինձ ալ այնպէս կը թուի թէ խնդիրը պարզ էր , այնքան պարզ , որքան դաւաթ մը մաքուր ջուր . խնդիրը Երեսօխտան էֆիչնախնները այնքան մատուցին մէջը թաթխեցին , որ այն պարզ և մաքուր ջուրը սղտարեցաւ և իւր թափանձիկութիւնը բոլորովին կորոյս : Կարձեա թէ 2 նիստէ 'ի վեր կատակերգական թատրոնի մէջ կըզբօնուէք :

Շատ մը երեսօխտանք ընդմիջելով կը բռնաբան Օսկանեան էֆիչնախնի դէմ , Ընդհ . Ժողովոյ նկատմամբ ծաղրական ակնարկութիւններ ընելով , կատակերգական թատրոնի նմանեցնելուն համար :

Ատենապետ էֆ . 'ի կարգ կը հրաւիրէ զՕսկանեան էֆ . աղղարարելով որ վիճարանութեան թեյը ձեռք առնու առանց անյարմար նմանութիւններ և անվայել խօսքեր մէջ ընրելով :

ՕՍԿԱՆԵԱՆ Խ . ԷՖ . — (Շարունակելով) Կարձեմ թէ ես իմ խօսքերուս մէջ չեմ սխալուած , ես բոլոր գիտեմ ինչ որ կըրնեմ . այնքան անհեթեթ գրութիւններ մէջ կը բերեն , այնքան անճշտեթ տրամադրանքներ կը ըլլան , և այնքան ծաղրելի ատենարաններ :

Դարձեալ ընդմիջուով և սաստիկ բողբոջներ երեսօխտանաց ոմանց կողմէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Օսկանեան էֆ . կրկին կաղղարարեմ և 'ի կարգ կը հրաւիրեմ զՁեզ , վասն զի իրաւունք չունիք Երեսօխտ . Ժողովին մէջ անարգական և նախատական նմանութիւններ ընելով , ուրիշները յանդիմանելու : Եթէ դարձեալ նախատական խօսքերով պիտի վիճարանիք հոս , խօսք չունիք : Արբազան Նախագահ , մի' խնդար ուրիշներուն պէս կ'աղաչեմ , որովհետեւ համարձակութիւն տուած կըլլաք այսպիսի անվայել վարմունքներու . կ'աղաչեմ որ Ձեր Արբազնութեան կոնմէ ալ պէտք եղած աղղարարութիւնն 'ի գործ դնէք : (Պատահարութիւն ժողովրդեան կողմէ) :

ՕՍԿԱՆԵԱՆ Խ . ԷՖ . — (Շարունակելով) Ըսել կուզեմ թէ այս խնդիրը նոր չէ , Սահմանադրութեան մէջ որոշուած է բացարձակապէս . ինչու ուրեմն երկպառակութեան առիթ կը ըլլայ . փորձը կը ցուցնէ որ քաղ . Ժողովոյ ընտրութեան վերաբերեալ յօդուածին փոփոխութիւնը հարկաւոր եղած է . Սահմանադրութեան 39 րդ . յօդուածը մեզի իրաւունք տուեր է վերաքննել . ես չեմ լսեր թէ բոլոր յօդուածները վերաքննենք , այլ այն յօդուածները միայն՝ որոնք քաղ . Ժողովոյ ընտրութեան կը վերաբերին : Նախ՝ 38 րդ . յօդուածը պէտք է սրբազրուի , որ քաղ . Ժողովոյ թըւոյն կը վերաբերի , և յետոյ 37 րդ . յօդուածը՝ որ ընտրութեան եղանակին կը վերաբերի : Այս երկու կէտերը պէտք է իրարմէ բաժնել , որպէս զի խնդիրը չը շփոթի :

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ . ԷՖ . — Նախընթաց նիստին խօսք առնող երեսօխտանք քաղ . Ժողովոյ ընտրութեան վրայ մեկնարանեցին և վարդապետեցին իւրաքանչիւքն իւր հայեցուածին համեմատ , ոմանք պատմութեան վերայ և ոմանք ապագային վրայ հիմնելով իրենց փաստերը . մենք ալ պիտի վարդապետեմք . բայց Օսկանեան էֆ . քանի մը խօսքեր տեսուհի համար Դիւանը 'ի կարգ հրաւիրեց զնա . եթէ ներքի չէին նրա խօսքերը և անյարմար էին , պէտք է որ ամեն մարդ ալ իր խօսքը գիտնայ . ինչ ձայնով որ մէկը խօսի , պէտք է որ նոյն ձայնով պատասխան առնու : Ես համամիտ եմ Պատենասեան էֆիչնախնի առաջներուն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — (Ընդմիջելով Ատենապետը) . Խնդրէն կը շեղիք . Դիւանը պարտաւոր է 'ի կարգ հրաւիրել խնդրէն . գարս ել

նաղ երեսօխտանները . ներքի է բարձրաձայն խօսիլ , բայց ներքի չէ հեղնալից և նախատական խօսքեր ընել :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ . ԷՖ . — (Գրաւոր) . Չարմանալի է թէ երբ խնդիր մը երևան կուգայ ժողովոյս մէջ , Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն իւր լուծումն ընտանալու , անյուսալի դժուարութիւններ կը բերէ իր հետ : Սահմանադրութեան այն յօդուածը՝ որ ծագած խնդրոյն լուծմանը կը պատկանի , կուզուի նոյն պահուն վերաքննութեան ենթարկել , թէ փորձառութիւն յառաջ բերուելով և թէ ներկային մէջ զայն անյարմար դատելով :

Մի և նոյն ժողովոյ մէջ քանիցս կը յեղ յեղին գործադրութեան մէջ եղած սահմանադրութիւն և անգործադրելի սահմանադրութիւնս բառերն , որք պահ մը կը մտցընեն մեզ մեր աղղային սահմանադրութեան գոյութիւնը . և սոյն վիճակին մէջ տարիներ կանցնին , տակաւին սահմանադրութեան վերաքննութիւնը կը յապաղի : Ոմանք սահմանադրութեան ոգւոյն համեմատ ընթանալ կը սնդեմ , ոմանք բառական գործադրութեան վրայ կը հիմնեն իրենց վիճարանութիւնը , ուրիշներ ալ կը պահանջեն որ իրենց կարծիքը , իրենց քրմահաճ կամքն օրինաց տեղ անցնի և տիրէ , ասկէ կը ծագի այն անկայուն վիճակը , որու մէջ ինկած է հիմա Ընդհ . Ժողովը , և ընդունայն կը տագնապի իրաց ելք մը , խնդրոց լուծում մը գտնելու . ինչ որ ալ ըլլայ պէտք է գիտնանք թէ օրէնքը գործադրութիւն կը պահանջէ : Եթէ պարագաները չեն ներեր մեզ սոյն վերաքննութիւնը ժամ յառաջ 'ի գլուխ հանել , պէտք է որ կամայ պիտանայ հնազանդ ինք այն օրէնքին , որ աղղին փրկութեան ուղեցոյցն է , և որ սոցմ մեր ձեռաց մէջ կը գտնուի . հետեւաբար ցաւալի է որ՝ Ժողովոյս բաւական մէկ մասը . ունեցածնիս չունեցածի պէս ըմբռնել կուզէ , և կատարելաւ գործեալ օրէնք մը ունենալու տենչով , բոլորովին անօրէնութեան կը դիմէ :

Օրէնք մը ունենալ և ըստ այնմ չընթանալի և թէ նորամար խնդիրներու մէջ զայն գործադրելու մասին վարանիլն , տարակոյս չկայ թէ օրէնք չունենալու աւելի մնաստակար հետեւութիւն կը բերէ : Մարդիկ որքան օրէնքներն ըստքով-ց բացատրեն , և նախատակաւ խնդ անգործադրելի համարին , օրէնքն իր գոյութեամբ

բը չը դադարի բնաւ արդիւնաւոր ըլլալէ : Եթէ
դործադրողներն որչնքին հեղինակութեանը
հոգատակին :

Ազգ. քաղ ժողովոյ նորոգ ընտրութեան
խնդիրն աւասիկ մեր յիշած խնդրոց կարգէն
է : որ ժողովոյս քանի մի նիստերն գրաւած
ըլլալէ : զատ : թերևս քանի մ'ալ գրադեցնէ :

Ա՛յ կարող է ուրանալ թէ Սահմանադրու-
թիւնն Քաղ ժողովոյ ընտրութեան եղանակն
ու թիւը որոշ արամադրած չը վնի : և ի՞նչ
հարկ կայ արդէն ընդունուած : վաւերացած և
գործադրութեան գրուած օրէնքի մը մէկ յօդ-
ուածոյն վրայ այսչափ անպատշաճ վիճարանու-
թեանց տեղի տալ և կարևոր ընտրութիւն մը
յաղապարհեցնել : քանիցս յայտարարելով 'ի մէջ
ժողովոյս' թէ : Սահմանադրութեան բառական
գործադրութիւնը սահմաններն պետական հար-
ուած հրաւիրել է : որչափ անկեղծ ալ ըլլայ
այս յայտարարութիւնը : իր բնութեան մէջ կեր-
պիւ իւրիք աղատ չէ սպառնալիքէ :

Նկատումներն բնաւ տեղի չեն կրնար ու-
նենալ օրինաց գործադրութեան մէջ : երբեմն
օրէնքին սղոյն և երբեմն բառին կոթնելով
որոշում տալէ աւելի վնասակար բան մը չը կրնար
ըլլալ : այս ընթացքը պահ մը օրէնքն ընդու-
նիլ և սլան մը եղծեալ ըմբռնել կենթադրէ :
ամէն ինչ որ կըլլայ աղէկ թէ գէշ : օրինաց
տրամադրութեանը պէտք է 'ի գործ գրուի :
նաև համամտութեան խնդիր յուզել աւերող է
և թերի տեսութեան արդիւնք : մինչդեռ Ե-
րեսփոխանական ժողովն իւր բնութեամբ տար-
բեր կարծեաց : տարբեր գաղափարաց տէր ան-
ձերէ կը բազկանայ : անկարելի է որ համամտ
ներդաշնակ ժողով մը ընտրուի : մտնաւանդ որ
Քաղ ժողովոյ պէս ժողով մը համամտութեան
պէտք չունի : Վասն զի նա՝ ինչպէս սխալմամբ
կը կարծեն ոմանք : գործադիր ժողով չէ : այլ
բողոք : խորհող : և մինչև իսկ՝ ինչպէս Սահ-
մանադրութեան 41րդ յօդուածը ցոյց կուտայ :
օրէնքի ժողով մ'է : որ տեսուչ և թող
Խորհրդոց պէտք եղած կանոնադրերն կը խմ-
բագրէ : Հուսի ուրեմն կ'եզրակացնեմ 'խօսքս'
թէ Քաղ ժողովոյ ընտրութեան համար ինչ որ
Սահմանադրութիւնը կը տրամադրէ : անխորտիս
պէտք է գործադրենք : Ժողովը փորձով տեսաւ
և ինքզինք տրամադիր զգաց գրեթէ երկու
նիստ անաջ տրուած որոշման մը հակառակ :
Երկու նիստ ետքը ուրիշ նոր որոշում մը տա-
լու : այս գրութեամբ օր մը թէ որ վերաբըն-

եալ Սահմանադրութիւն մը ալ ունենանք : Ըն-
քերնիս : յառ հաւ տեսիլան է որ ժողովոյ այս
օրուան արարտով վիճակին դարձեալ երթար-
կեմք : նշն օրինաց գործադրելիութենէն և ո-
գո՛ չըլլարու նպատակաւ միշտ փորձառութիւ-
նը իբրև գործար փոստ յառաջ քննող : որ-
պէս զի Սահմանադրութիւնը ազգին համար
անգործադրելի դասուի : և ոմանց առ այս
յայտնած բազմանքը իրակ ձեռքիւն դանկ :

ԱՍԵՆՍՊԵՏ ԷՊՍՏ ԷՊՍՏ — Անցեալ նիստին խօսք
ունեցողները խոսեցան և շնորհակցին : հիմա ու-
րիշ 7 երեսփոխանք կան որ խօսք ուղած են :
բայց նորս խօսելէն անաջ պատկառելի ժողո-
վոյ պէտք է յայտնել իւր կարևոր թէ կուզէ վի-
ճարանութիւնը շարունակել կամ դադար : խնդ-
րեմ որչնցէր դոյս : վասն զի քառօրդ մը դա-
դար կուզուի :

ԽՕՃՍՍԱՐԵԱՆ ՕՒԷՑ — Կառավարիւմ որ
դադարէ անաջ քուէի դնէր թէ Սահմանադ-
րութեան համեմատ ընտրուի Քաղ ժողովը
թէ չէ :

ԽՈՐԷՆ ԵՊԻՍՍ — Խնդիրը բաւական պար-
զուած չ'երևիր : ուստի քանի որ ոմանք խօսք
խնդրած են և կուզեն խօսիլ : պէտք է որ ա-
նոնց ալ խօսք արուի : որպէս զի խնդիրը կա-
տարելապէս լուսարանուելէ ետև քուէի գրուի :

Ատենապետ էՊ. քառօրդ մը հանգիստ կա-
ռավարիլ է : և քառօրդէ մը ետև նորէն Ատեա-
նը կը շարունակուի :

ԽՈՐԷՆ ԵՊԻՍՍ — (Գրաւոր) :

Տեսաք իմ
Քաղաքական ժողովոյ ընտրութեան խնդի-
րը՝ Ընդհանուր ժողովոյդ երեք նիստը գրաւե-
լու շափ դժուարութիւններ ներկայացոյց : Այս
դժուարութիւնները չէին ծագեր եթէ ամեն
երեսփոխան սոյն սկզբան համեմատ մտածէր :
այսինքն թէ Սահմանադրութիւն մը : կամ ը-
սեմ՝ տիրող օրէնք մը ունիմք թէ ոչ : Եթէ ու-
նիմք : հարկաւ այն օրինաց տրամադրութեան
համեմատ սխտի լուծուէր այս մեծ խնդիրը :
խնդիր՝ որ նախատեսած է 1865 ի Սահմա-
նադրութիւնը : և 38րդ յօդուածովը լուծած
բացորդ եղանակաւ :

Ինչո՞ւ ուրեմն այսքան շուարումն : Ընդդի-
մութիւն և վէճ այսպիսի սլարդ խնդրոյ մը
համար : Պատճառը խիստ յայտնի է Տեսաք :
Չեղով ոմանք Սահմանադրութիւնը տիրող օ-
րէնք կը համարին : բայց ոչ ամենքին : Երկու
կողմն ալ իրենց կարծիքը հաստատելու շափ

ժամանակ կուզեն յառաջ մատուցանել :

1865 ի Սահմանադրութիւնը տիրող օրէնք
համարողները կայսերական հրովարտակն յա-
ռաջ կը բերեն : որով կատարուած է այն :
Ազգին ընդունելութիւնը կը յիշեցնեն : որով
ընդունուած է այն : Զ'իսկ կայսերական հրո-
վարտակ մը կըսեն : որ խափանման վճիռն ար-
ձակած ըլլայ : Զ'իսկ Ազգային Ընդհանուր մու-
ղով մը որ նոյն Սահմանադրութիւնը դադար-
եալ հրատարակած ըլլայ : Ապա ուրեմն աղէկ
կամ գէշ ընկալեալ օրէնք մ'է այն : ուստի և
պէտք է որ գործադրուի Քաղ ժողովոյ ընտ-
րութեան կենսական խնդրոյն մէջ :

Ի՞նչ սրատարտան կուտայ հակառակ կու-
տակցութիւնը : Այն Սահմանադրութիւնը Պե-
տական հարուած մը կրեց : քանի մը տարի
չնշատաւ մնաց : Տէրութիւնը ժամանակ մը
անոր քանի մը յօդուածները անգործադրելի
բրաւ : Ազգն իսկ իւր Ընդհ. ժողովովն երկու
տարի Քաղ ժողովոյ ընտրութեան կերպն այ-
լափոխեց : մեծամասնութեան տրամադրութիւ-
նը այլազգ տնօրինեց : և ուրիշ այսչափութիւն-
ներ ևս ներմուծեց : սրովեաև վերաքննու-
թեան մէջ է այն Սահմանադրութիւնը : Ուստի
կը հեռուի որ Ազգը յօգուտ 'ի կիր արկանելով
իւր փորձառութիւնը : այն Սահմանադրութեան
մէջի դժուարագործադրելի տրամադրութիւն-
ներն 'ի բաց թողու : և նոր եղանակ մը 'ի
ձեռն առնու : հեռուելով փորձառութեան դա-
սերուն : Ապա ուրեմն Ընդհ. ժողովը կարող է
Քաղ ժողովոյ ընտրութիւնը ազգային ներկայ
պարագայից համեմատ լուծել : և ոչ թէ կաշ-
կանդել՝ այն օրինաց տառին հետ՝ որ արդէն
բազում իրամատուցութիւններ ունեցած է ցայ-
սօր : և անբանաբարելիութեան իրաւունքը գը-
րեթէ կորսնցուցած :

Օրէնք մը որ փոփոխութիւններ իւր մէջն
ընդունել է : արդէն քայքայման վիճակի մէջն
է ևս առաւել : երբ նա վերաքննութեան շըր-
ջանին մէջ գտնուի : ինչպէս է արդի Սահմա-
նադրութիւնը : Նորա դատակնիքը այն օրը
տուած է Ընդհ. ժողովը՝ երբ իւր նորընտիր
Պատրիարքին ուխտը նորա սղոյնս վրայ մի-
այն ընդունել է և ոչ տառին : որով և լը-
սեղեայն տուեր է իրանութիւն ուզած յօդ-
ուածն ընդունիլ և գործադրել : Երբ Պատրի-
արքին յանձնել է վարչութեան մը՝ այսինքն
կրօնական և Քաղաքական ժողովոց ամբողջ
ընտրութիւնը : ընտրութիւն՝ որ իւր բացար-

ձակ իրաւունքն էր : Երբ Սահմանադրութեան
սլայմաններն չը լրացնող անձինք՝ ընդունուեր
են յանդամակցութիւն Ընդհ. ժողովոյն : որով
և Ընդհ. ժողովն մասամբ ազօրինաւոր վիճակի
մէջ է ենթարկուեր անաջի Սահմանադրու-
թեան և անաջի Ազգի :

Ասոնք ցուալի իրակոնութիւններ են :
Տեսաք : որ տեղի ունեցեր են : ուստի և այս
իրակոնութեանց առջև ենթադրել : թէ 35 ի
Սահմանադրութիւնը գործադրութեան մէջ է :
ինքզինքնիս խօսքելու ջանալ է : բայց 'ի դուր :
իրողութիւնը կեցած են և զմեզ զգաստացնե-
լու և ընկերանելու շափ գորութիւն ունին :

Արդ՝ քանի որ Սահմանադրութիւնը այս
խարխուլ վիճակին մէջ կը նշմարուի : քանի որ
անոր սղոյն վրայ միայն կուխտէ գործադիր
իշխանութիւնը : ինչո՞ւ Քաղ ժողովը տառա-
կան տրամադրութեամբն ընտրուի : մինչդեռ
Ազգին բողոքական փորձառութիւնը զմեզ կը
հրաւիրէ սոյն կենսակէտ խնդրոյն մէջ աւելի
ազգին օգուտը նկատել՝ քան թէ Սահմանադ-
րութեան բառական գործադրութիւնը : Չա-
տեալ օրէնքի՞ մը թէ Ազգին օգտից նախան-
ձայնդ պէտք է հանդիսանայ Ընդհ. ժողովը :
Մեզ այնպէս կերևի որ Ընդհ. ժողովը պէտք
չէ վարանի այս խնդրոյն մէջ : քանի որ ցարդ
նախանձախնդիր չէ եղած նոյն օրինաց անթե-
րի գործադրութեանը : Որո՞ւն է յանցանքը :

Բայց միթէ Ընդհ. ժողովս չ'ունի՞ իրաւա-
սութիւն իւր սխալմունքներն ուղղել : և Սահ-
մանադրութիւնը 'ի լիակատար գործադրու-
թիւն վերադարձնել : Մենք չեմք ժխտեր
Ընդհ. ժողովոյ այս ամենամեծ իրաւունքը :
Բայց հարկ է որ չէ թէ միմիայն 38րդ յօդ-
ուածոյն : այլ ամեն յօդուածոց՝ որ ցարդ խը-
րամատուած են : Ընդհ. ժողովը վերանորո-
գութիւնն նախ որոշէ : Հարկ է որ նախ և ա-
ռաջ Պատրիարքական ուխտը իւր օրինաւորու-
թեան դարձնէ : Հարկ է որ Երեսփոխանաց
մէկ մասը իւր պատկառելի ատենէն 'ի բաց
հանէ : Հարկ է որ մինչև ցայժմ եղեալ որոշ-
մունքներն յերկուց և յերից ամաց հետէ՝ ան-
վաւեր : հրատարակէ : Հարկ է ոչ միայն 20
հոգւոյ Քաղաքական ժողով մը կազմել : այլ և
միւս ամեն խորհուրդները : որոց համագումարը
44 հոգւոյ կը հասնի : թիւ մը՝ որոյ կազմու-
թեան դժուարութիւնը կարծեմ քիչեր կան
մեր մէջ չի խոստովանող : Հարկ է վերջապէս
որ Սահմ. վերաքննութիւնը յանձնուի ասոնցմէ

կազմեալ յանձնաժողովոյ մը և ոչ թէ Ընդհ. ժողովոյն, ինչպէս այժմ օրինադրած է սոյն ժողովոյ ընդդէմ տրամադրութեան արդի Սահմանադրութեան : Հարկ է, այո՛ հարկ է Տեաքը, զայս ամենայն առնել, անողորբի տրամաբանութիւնը զոյն մեզմէ կը պահանջէ :

Եթէ Ընդհ. ժողովը կարող է զայդ ամենայն կատարել, որոյ վրայ ներուի մեզ ըսել թէ կը տարակուսիմք, եթէ Սահմանադրութեան անաշտ գործադրութեանը այսօր որոշ ձեռնամուխ լինել, մեք առաջինը կըլլամք իրեն ծափահարելու : Բայց կը պահանջենք որ անողորբ գտնուի իւր որոշմանը, անողորբ իւր գործադրութեանը մէջ :

Թող ժողովը որոշէ թէ գործնական է այս միջոցը :

Մեք համոզուած ենք դժբաղդարար թէ՛ ո՛չ : Այս ուրեմն աւելի իմաստութեամբ վարուած չեմք ըլլար եթէ իբրև հեռեանք մեր տրտուր փորձառութեանց՝ այսօր ազգը անել չբռնանակի մը մէջէն հանել աշխատիմք, գործնական եղանակ մը բռնելով ֆաղ. ժողովոյն ընտրութեան մէջ, եղանակ մը՝ որ Սահմանադրութեան ոգւոյն համեմատ ըլլայ, թէ և ոչ ճիշդ ներկային տառական տրամադրութեանցը : Այսինքն՝ ընտրութիւնը կատարուի գարձեալ պատկառելի ժողովոյ ձեռքով, որով ստանայ նա իւր անժխտելի իրաւունքը, բայց սոյն ընտրութիւնը կատարուի ցուցակի մը մէջէն, զոր Ս. Պատրիարքը Ընդհ. ժողովոյ դիւանին հետ խորհրդակցութեամբ ներկայացնէ :

Անշամոց որքանութիւնը պէտք չէ բանակրուութեանց տեղի տայ՝ ժողովոյ մը անդամոց թիւը, հեռեանք է ժողովոյն կազմակերպութեանը, և ոչ եթէ մտացածին թուական սրղումն է որ զժողով մը պիտի կազմակերպէ :

Ըստ մեզ Հայոց ֆաղ. ժողովը կը ներկայացնէ չորս այլեայլ ճիւղեր կամ յանձնախմբքեր : Ա. Յարաբերութեանց. այսինքն Տէրութեան և Ազգի, Օտարաց և Ազգի մէջ ունենալիք յարաբերութիւնները : Բ. Դատարարական : Գ. Ելեմտական : Դ. Կարուածական : Այս չորս մասնախմբքը իրենց մասնապետին հետ կը տնօրինեն իրենց ճիւղին վերաբերեալ գործերը, և ի հարկին կամ ամբան մէկ կամ երկրոց չորս ճիւղերն ի մի համախմբելով՝ կը ձեռնարկեն ֆաղ. ժողովը :

Սոյն կերպով կազմուած ֆաղ. ժողով մը քաղաքական անտեսութեան օրինաց համեմատ

կազմուած կըլլայ աշխատութեան բաժանումն ունենալով, որով և առաւել ևս դիւրաւ կարող է գործել, և առաւել օգտակար կերպով գործել, որովհետեւ ամեն մէկ ճիւղ՝ զլիարարակէս իւր գործունէութեան շրջանը ունեցած կըլլայ, ուստի և համարատու նոյն պաշտաման մասնաւորապէս Մինչդեռ արդի Սահմանադրութիւնը՝ համարատուութիւնը 20 անձանց վրայ բաշխելով և համարատուութեան միջոցը խիստ ընդարձակ ձգելով, անկարող կընէ զանդամ որ ամեն մէկ մասին համարատու գտնուի : Ինչ ոչ այսչափ միայն, այլ և իրենց ընտրող մարմինը, այսինքն, զԸնդհ. ժողովը, ի մեծի մըտատաջութեան և ի յուզման կը թողու թէ ինչպէս գտնէ 20 այնպիսի անձինք որ հաւասար հմտութիւն ունենան, Յարաբերական, Դատարարական, Ելեմտական և Կարուածական խնդիրներու :

Ամեն ազգաց մէջ՝ բայց մեր ազգին մէջ ևս առաւել համայնազէտ անձինք խիստ սակաւաթիւ են : Մեք և ոչ մէկ մը գիտեմք, Տեաքը թող թէ 20 . . .

Բայց երբ մեր առաջարկութեան համեմատ ֆաղ. ժողովոյ պաշտօնը վերլուծուի, սոյն ժամանակ ամեն մէկ ճիւղին համար բազմութիւն արժանաւոր անձինքներ մեր մտաց առջև կը ներկայանան, այն ատեն մեր ընտրութիւնը կը դիւրանայ, այն ատեն կարող անձինքներ կը բարձրացնենք այնպիսի պաշտամանց՝ որոց համարատուութեանը վրայ երաշխաւորութիւն կուտայ մեզ նոցա պաշտօնին ընտրութիւնը և անձնական արժանաւորութեան (հանգամանքը) :

Թողումը ուրեմն որ Ս. Պատրիարքը մեր ժողովոյ դիւանին հետ ներկայացնեն մեզ երեք ընտրելի Ստեղծապետութիւն այսպիսի ֆաղ. ժողովոյ մը : Այն ատենապետը մեր ընտրութեան յետոյ՝ ներկայացնէ մեզ երեքական ընտրելի Դատարարական, Ելեմտական և Կարուածական ճիւղերու մասնապետութեան : Մասնապետը ներկայացնեն կրկին թուով իրենց ճիւղին անդամները, որ և վաւերանան մեր քուէից բողոքական առաւելութեամբ : Ֆաղ. ժողով մը որ 4 ճիւղ պիտի ներկայացնէ, թող ամեն մէկ ճիւղի նախան անդամ ունենայ, և ահա իսկոյն կուենանք 20 անձանց գումար ժողովարձը՝ զոր կը պահանջէ 1863 ի Սահմանադրութիւնը, և ոչ սոյն տեսութեամբ ոչ միայն բազմութիւն չեմք գտնար, այլ և մեր առաջարկեալ եղանակին համեմատ՝ կազմուած կըլ-

լաւք սյնալիսի ժողով մը որ անհամատարար քայքայման վիճակի մէջ դրած չեմք ըլլար, ոչ թովհետեւ Ստեղծապետին և Մասնապետներուն մէջ, մասնապետաց և անդամոց մէջ բնական ներդաշնակութիւն մը կը տիրէ, ներդաշնակութիւն՝ որ կը բղխի բո՛ւն իսկ ընտրութեան գործադրելի եղանակէն, որ թէ՛ Սահմանադրական է և թէ՛ բանաւոր, ուստի և ամենաշարժար ազգին ներկայ հանգամանացը : Կը տեսնէք Տեաքը, որ մեք միապետութեանէ կը խորշիմք, անձնական իշխանութեան և ընտրութեան հակառակ ենք, մեք Վարչութեան ընտրող մարմին օրինաւոր՝ միտոյն զԸնդհ. ժողովոյ գիտեմք. յայտ է Սահմանադրութեան մը ոյժը. մնացորդը ձե է, ձեր ըստ ժամանակին և ըստ հանդամանաց կը փոփոխին, ոգին է որ պիտի իշխէ Սահմանադրութեան մը մէջ, ոգին է որ պիտի փնտոէ Սահմանադրական ժողովուրդ մը :

Կարելի է որ այս մեր առաջարկութեան մէջ ժամանակը եղանակաւ որոշման յառաջ բերէ, թողումը ուրեմն որ ժամանակն սկսի գործել : Այսօր մեր սոյն եղանակը որոշեմք առժամանակեայ կերպով, որով և փորձ մը աւելցուցած ըլլամք վերաքննութեան առջև : Տեսնեմք թէ այս կերպ կազմուած ֆաղ. ժողով մը աւելի գործունէութեան, աւելի օգտակարութեան աւելի հեռաւորութեան արդիւնքներ պիտի ընծայէ՞ թէ ոչ : Մեր համոզումն է թէ՛ այո՛, փորձը անուշա դմեզ պիտի չը շիկնեցնէ, ինչպէս շիկնեցոյց 1863 ի Սահմանադրութիւնը . . .

Համառօտեմք Տեաք մեր առաջարկութիւնը, կազմել նախ օրինաւոր դիւան մը Ընդհ. ժողովոյ, վերջ տալով այն գայթ ի գայթ վիճակին՝ որ ոչ միայն պատիւ չը բերէր Ազգ. ժողովոյս, այլ և ազարդիւն կը թողու երեսփոխանական ամեն կարևոր ձեռնարկութիւն : Երկրորդ՝ Ս. Պատրիարքին և Նորընտիր դիւանին յանձնել որ որոշեալ ժամանակի միջոցի մէջ ներկայացնեն ֆաղ. ժողովոյ Ատենապետին և Օտարապիկ ցուցակը, և ըստ այնմ ընտրական գործողութեանց ձեռնամուխ լինելով՝ կազմել իսկոյն նոր ֆաղ. ժողովը : Իւ երրորդ՝ ամեն խնդրէ առաջ՝ Ընդհ. ժողովս իր բոլոր ուղարկութիւնը ու խտէ ամփոփել Սահմանադրութեան վերաքննութեանը վրայ, հաւատարմով որ մեր արդի կեղտկարծ վիճակին ուրիշ կենսաբեր գարնան չլիայ բաց ի Սահմանադրութեանէ :

Ազգ մը ինքզինք արժանարար Սահմանադրական կոչել այն ժամանակ միայն կարող է երբ օրինաւոր Սահմանադրութիւն մը կուենայ, որոյ մէջ ամբիփաւած են ոչ միայն իւր անցեալն և իւր ներկայն, այլ որ մեծն է իւր Ազգայն :

Ազգայն, Տեաքը, ազգայն ըլլայ մեր բոլոր ըլձից և մտածութեանց կէտը, զոյն խորհիմք զտիւ և զգիշեր, և առ այն առաջնորդեմք այն մեծախոհ այն կորովի Ազգը՝ որ լի հաւատով և լի յուսով մեր ձեռքն է թողուցեր իւր բազմիւն տնօրինութիւնը :

Տեաքը, թողումը մեր անձնականութեան նկուս մտածութիւնը, և մեծ մտածութիւն մը ունենամք . . . Ա. զգը :

ԵՌՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Խորէն Սրբազանի առաջարկութիւնը կը կրկնեմ և կը խնդրեմ որ քուէի դրուի :

Այս միջոցին ուրիշ քանի մի ձայներ աչքուէի դրուելը կառաջարկեն, իսկ ոմանք կը բողոքեն ըսելով թէ դեռ վիճարանութիւնը զոյրուած չէ :

Դիւանը կը յայտարարէ թէ տակաւին վիճարանութիւնը բաց ըլլալով՝ ուրիշ խօսք ու զօրներն ալ պիտի խօսին :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Խորէն Սրբազանի առաջարկութիւնը նոր է և իր մութ կողմերն ունի, որք բացատրութեան կարօտ են. վասն զի անոր մէջ վտանգ կայ : Խորէն Սրբազան կընդունի որ ֆաղ. ժողովոյ թիւը 20 լինի, կընդունի նաև որ ֆաղ. ժողովը չորս յանձնաժողովոց բաժնուի, բայց նոյն յանձնաժողովոց ատենապետներն Ընդհ. ժողովէն ընտրուելու համար պայման կը դնէ որ Ս. Պատրիարքն ու Դիւանը և Օտարապիկ թուով ընտրելեաց ցանկ մը ներկայացնեն, և ընտրութիւնը նոյն ցանկին վրայ կատարուի. մի և նոյն իրաւունքը կուտայ նաև յիշեալ ատենապետաց, որ իրենց ընկերակցաց ընտրութեան համար և Օտարապիկ թուով ընտրելեաց ցանկ ներկայացնեն, և ընտրութիւնը անոր վրայ կատարուի : Այս դրութիւնը միապետական է, քանի որ այս կերպով Ընդհ. ժողովոյն ձեռքէն կառուուի ընտրութեան իրաւունքը : Օրինակով մը բացատրեմ : Արնայ ըլլալ որ դատարարական պաշտօնէի ընտրելի ներկայացընեն զիս և իմ քովս այնպիսի մէկը դնեն՝ որ շատ վեր լինի, և ես չընտրուիմ, և կամ վաճ լինի ու ես ընտրուիմ, ասով Ընդհ. ժողովոյ

իրաւունքը տանտիրոս կըլլայ : Խորէն Սրբազան մեր օրէնքին չը գոյութիւնը Պետական հարուածէն կառնու և զանի հիմ կընէ իւր առաջարկութեան . բայց պէտք է գիտնայ թէ իւր ներկայացուցած առաջարկութիւնը , որ վերաքրննութեան ծրագրէն ելած է , մերժուեցաւ Պետական հարուածին ծնունդն ըլլալու առարկութեամբ . պէտք է որ Քաղ. Ժողովը 2) հոգիէ ընտրուի Ընդհ. Ժողովէն , և զիտէ՞ք ինչու , խայտառակելու համար այն անձինքը՝ որ զայնին Բ. Գուման ըսին թէ Սահմանադրութիւնը չը քաղեր , և զայն անժամանակ դադարման դատապարտեցին : Պատեանէն է՞ք նտիր գալով , կրնեմ թէ Գաղղիոյ Պետական խորհրդոյ համար մէջ բերած մեկնարանութիւնը սխալ է . որովհետեւ Օրէնսդրական ժողովոյն մէջ Պետական խորհուրդը չէ թէ Հանրապետութեան նախագահ Պ. Թիէրէն ընտրուելու որոշում տրուեցաւ , այլ նոյն իսկ Օրէնսդրական ժողովին : Անմը որ անհեթեթ կը համարին մեր Քաղ. Ժողովոյն Ընդհ. Ժողովէն ընտրուելու առաջարկութիւնը , նոյն իսկ իրենց վաստերովը հակառակը կը հաստատեն : Իսկ Օսկանեան է՞ք նտիր չը գիտեմ թէ իր աչքը պղտորած էր որ խնդիրը պղտորութեան մէջ կը տեսնէ , թէ մենք պղտորեցինք . բայց վրատահ եմ թէ իրենք են պղտորողը : Կրնեն թէ 20 հոգիէ Քաղ. Ժողով կազմել անկարելի է և թէ գործ չը կրնար տեսնել . այս կարծիքն այնչափ սխալ է որ բոլոր թաղերն իսկ կը բողբեն անոր դէմ . թաղ. խորհուրդներ կան որ 12 հոգիէ ընտրուած են և կը գործեն . միթէ Քաղ. Ժողովն անոնցմէ պզտիկ է . երբ Քաղ. Ժողովոյ մէջ աղեցութեան տէր մարդ գտնուի կրնայ դործել և երբ չը գըտնուի չը կրնար դործել կրնեն . ո՛չ , չը պիտի ընտրենք այն անձինքը զոր դուք կուզէք , այլ պիտի ընտրենք այնպիսի անձինք , զոր մեք կուզենք : Մինչև անգամ , չեմ ուզեր անուն տալ , մեր մէջն է այն անձը՝ որ ժամանակաւ Բ. Գրան մէջ լսած է բարձրատիճան պաշտօնակալէ մը թէ «չափխըն մարութիւն» մարդոցմէ բաղկացած է Քաղ. Ժողովնիդ : Պէտք է ցուցնենք թէ մենք «չափխըն» չենք , ազգին շահը , անցելոյն վրէժխնդրութիւնը կը պահանջէ որ այնպէս վարուինք , և ընտրենք այնպիսի անձինք՝ որոնք սիրահար լինին այս սկզբունքին : Վերջապէս , թէ՛ օրէնքին և թէ՛ նոյն խմբակին յարուցանելիք արգելքներուն դէմ ամեն զո-

հոգութիւն աչք առնելով պիտի ցուցնենք որ երբ օրինաւոր մարդիկ կրնարուին , անոնց անկարելի է ըսածը պիտի կրնայ կարելի ըլլալ :

Այս պահուն՝ ոմանք վիճարանութեան դատարանը կառաջարկեն և ոմանք շարունակութիւնը :

Ատենապետ է՞ք . ժողովոյն մէջ ընթացած չլուկը հանդարտեցնելու համար կատարուի քուէի դնել և ժողովոյն կամքն իմանալ թէ արդեօք վիճարանութիւնը բաւական կը համարի՞ թէ ո՛չ :

Ուստի քուէի դրուելով , 4 քուէի դէմ ամենամեծ մասով վիճարանութեան դատարանը կորուսի :

Ատենապետ է՞ք . կը յայտարարէ թէ Քաղ. ժողովոյ ընտրութեան խնդրոյն վրայ վիճարանութիւնը գոցուած է , և թէ նոյն ընտրութեան եղանակին վրայօք եղած առաջարկութիւններն մի առ մի քուէի դնելէ առաջ , կը պարտաւորի նախապէս ժողովոյն կամքը հասկընալ թէ արդեօք Քաղ. ժողովոյ ընտրութիւնը սահմանադրութեան արտահայտութեանց համաձայն կուզէ՞ք կատարել թէ ո՛չ :

Սակայն այս կէտը քուէի դրուելու միջոցին ազնուկ կը ծագի ժողովոյն մէջ , և քուէարկութեան ձևին դէմ բողբենք կրլան : Այս պատճառաւ քուէարկութեան փորձը կը չփոթի , և ոմանք կառաջարկեն որ գաղտնի քուէարկութիւն ըլլայ :


Մինչդեռ Ատենապետ է՞ք . Այո՛ կամ ոչ բառերով գաղտնի քուէարկութիւն ընել կը պատրաստուի , արդէն սկսած յուլուսներ կը սաստկանայ , և անվերջանալի կերպարանք կառնու հակառակ դիւանին յորդորներուն և անընդհատ զանգակահարութեանց :

Սրբազան Նախագահը յուլուսնոց շարունակութեան միջոցին ոտքի ելնելով , դիւանին կը հրամայէ Ատենաք գոցել , և ինք կը մեկնի ժողովէն :

Ատենաք կը գոցուի ժամը տասնուկէսին :

Ս.Ռ.Ժ.Ա.Մ.Ա.Ն.Ա.Կ.Ե.Ա.Յ
 Ա.Տ.Ե.Ն.Ա.Գ.Պ.Բ.Ր
 Յ. ԿՐՃԻԿԵԱՆ

Ա.Տ.Ե.Ն.Ա.Պ.Ե.Տ
 Ա.Մ.Գ.Ե.Բ.Կ.Ե.Ա.Ն



ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԵՎԵՆՈՒԹԻՒՆ ԱՂԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԳԻՆ

կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի , և կը գտնուի
Եկեղեցեաց բանկալները :